

Աշխատանքային այցով Գեղարքունիքի մարզում էր ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարը

19.04.2016

Ապրիլի 19-ին ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանն աշխատանքային այցով եղավ Սեւան քաղաքի համար 3 հիմնական եւ ավագ, Լճաշենի եւ Նորատուսի համար 1 միջնակարգ, Գավառի համար 4 հիմնական դպրոցներում եւ Գավառի պետական համալսարանում: Նախարարին ուղեկցում էին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանը եւ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարիկ Բաղայանը: Տեղերում Գաբրիել Ղազարյանը ծանոթացավ դպրոցների մարզադահլիճների եւ շախմատի դասասենյակների պայմաններին ու հագեցվածությանը, ֆիզկուլտուրա եւ շախմատ առարկաների դասավանդման դրվածքին: Կրթական հաստատություններում կատարված ուսումնասիրությունների արդյունքները նախարար Գաբրիել Ղազարյանը Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հետ համատեղ քննարկեց Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում, որին հրավիրված էին մարզի բոլոր հանրակրթական դպրոցների տնօրենները եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչները: Այս այցը նախատեսում է ի հայտ բերել այն խնդիրները, որոնք ուղղակիորեն առնչվում են ինչպես մարզադահլիճների ընդհանուր վիճակին, այնպես էլ ֆիզկուլտուրա առարկայի դասավանդմանը եւ ծառայում են հանրակրթական դպրոցների առջեւ: Մի դեպքում ունենք նորոգված ու կահավորված մարզադահլիճ, որ չի ջեռուցվում, մեկ այլ դեպքում՝ ջեռուցվող մարզադահլիճ, որ մարզագույքի կամ նորոգման խնդիրներ ունի: ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը տեղերում համակարգում է բարձրացված հիմնահարցերը, որոնք առաջիկա 2-3 տարիների ընթացքում կգտնեն իրենց լուծումները, - հավաստիացրեց նախարարը:

Մարզի որոշ դպրոցներ ունեն մարզադահլիճային անբավարար պայմաններ, մարզագույքի ու նորոգման խնդիրներ, որոնց պետք է քայլ առ քայլ լուծում տանք: Ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման որակական կողմի ապահովման համար պետք է լինենք ավելի հետեւողական, կարողանանք քիչ միջոցներով ավելի կարելուր խնդիրներ լուծել: Ֆիզկուլտուրա առարկայի ավարտական քննությունը հանրակրթական դպրոցներում կանցկացվի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի մասնակցությամբ: Մենք պետք է ունենանք միանգամայն առողջ եւ ուժեղ սերունդ, ինչն անհնար է իրագործել առանց ֆիզկուլտուրա առարկայի պատշաճ դասավանդման: Շատ կարելուր է բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների ներգրավումը, որը պարտադիր պայման կլինի եկող տարվանից, - հանդիպման մասնակիցներին դիմեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Հանդիպման ավարտին նախարար Գաբրիել Ղազարյանը պատասխանեց ֆիզկուլտուրայի ուսուցիչների կողմից բարձրացված հարցերին: